է զուտ Հայկական գիւղ, որի բնակիչները Զամխալի[1]) ժամանակ և սրանից էլ առաջ՝ գաղթել են և ցրուել են զանազան կողմեր, թողնելով միայն մի քանի տուն, որոնց ներկայումս յիշում են մօտ 60 տարեկան ծերունի թուրքերը[2]):

«Այդ ծերունիներից մինը ասաց ինձի, որ իւր պատանեկութեան ժամանակ բնակում էին միայն մի քանի Հայեր. նա միայն կարողացաւ անունները յիշել. — Խաչատուր, Իւան (Յովհաննէս), Փուղոս (Պօղոս), Ամիուշ (Յարութիւն), Խազար (Ղազար) . . . :

Դրանք էլ ժամանակի ընթացքում անյայտանալով մնում է միայն Խաչատուրը, որն և իւր ամբողջ կեանքը նուիրում է անտէր մնացած սուրբ Գրիգորիսի մատուռն ծառայութեանը: Վերջինս եւս մեռնում է խորին ծերութեան մէջ և վերջանում է Մօլլա Խալիլի Հայ ազգաբնակութիւնը:

«Խաչատուրը թաղուած է մատուռի հիւսիսային կողմը. նրա վրայ ձգուած տապանաքարի վրայ կարդացինք հետեւեալը:

«Այս սուրբին ծառայող Խաչատուր Աղասխզալով. 1857 թ. սեպտ. 20ին»:

Ուրեմն 33 տարի է, որ Մօլլա Խալիլը զրկուել է Հայ ազգաբնակութիւնից:

«Բայց ինչի են այժմ թուրքեր բնակւում, և ինչի հայի գիւղի անունը Մօլլա Խալիլ է:

«Ես թուրքերէն չիմանալով, խնդրեցի Տէր հօրը, որ այդ մասին հարցնէ ծերունի թուրքերին, ծերունիներն ասացին, որ յիշեալ գիւղը զուտ հայկական էր, և այն ժամանակ և ոչ մի թուրք չկար: Ըրջակայ ամենամօտիկ գիւղերից մինի թուրքերը տեսնելով որ հայերը գաղթում են, նրանց կալուածները

---

[1]) Շամախլը 70 տարի յառաջ Տաղտան Քիւրայի և Նորայ շրջակայքի գաւառաց իշխող Խանն էր:

[2]) Մօլլա Խալիլից գաղթած Հայերը. ինչպէս ասացին մեզ, Ղզլարի մօտ մի գիւղ են հիմնել եւ իրենց նախնական գիւղի անունով կոչել են Մօլլա Խալիլ: